



«ՀՀ Կամուրջ» ծրագիրն իրականացվում է ՀԲԸՄ կողմից՝
ԵՀՀ-ի հետ համագործակցությամբ

**Էստոնիայի գեղարվեստական տպագրության ասոցիացիայի
նախագահ Ինգա Հեամեգիի զեկուցման հաշվետվություն**
Հոկտեմբերի 4, 2019թ., 15:00 – 17:30
Վայրը՝ Երևանի Ժամանակակից արվեստի թանգարան
Հասցե՝ ք.Երևան, Մաշտոցի 7

Գեղարվեստական տպագրության երկրորդ միջազգային բիենալեի շրջանակում Եվրասիա համագործակցություն հիմնադրամի աջակցությամբ Հայաստանում գտնվող՝ Էստոնիայի գեղարվեստական տպագրության ասոցիացիայի նախագահ և Գեղարվեստական տպագրության առաջին միջազգային Բիեննալե, Երևան 2017-ի միջազգային ժյուրիի նախագահ տիկին Ինգա Հեամեգիի հետ հանդիպումը, որը Հայաստանում գեղարվեստական տպագրության ոլորտի ուսանողներին, արվեստագետներին, արվեստի և մշակույթի հասարակական կազմակերպություններին, ինչպես նաև այդ ոլորտով հետաքրքրված այլ անձանց տպագրական արվեստի զարգացման առանձնահատկություններին և միտումներին ծանոթացնելու նպատակ ունեւ, տեղի ունեցավ 2019թ. հոկտեմբերի 4-ին Եվրասիա համագործակցություն հիմնադրամի և «Մշակույթների երկխոսություն» կազմակերպության համատեղ ջանքերով:

Միջոցառման օրակարգը և նպատակները ներկայացնելուց հետո, ողջույնի խոսք ասաց «Մշակույթների երկխոսություն» կազմակերպության հիմնադիր նախագահ Սոնա Հարությունյանը: Այս Էստոնիայի գեղարվեստական տպագրության ասոցիացիայի նախագահ Ինգա Հեամեգին ներկայացրեց «Գեղարվեստական տպագրության զարգացման միտումները Տալլինում» իր զեկույցը՝ խոսելով գեղարվեստական տպագրության հմտությունների, Էստոնիայում գեղարվեստական տպագրական արվեստի զարգացման միտումների մասին, զուգահեռ անցկացրեց միջազգային դաշտում, ինչպես նաև Հայաստանում գեղարվեստական տպագրական արվեստի զարգացումների միջև:

Ինգա Հեամեգիին իր վերջին անհատական ցուցահանդեսի օրինակով ներկայացրեց քաղաքական, սոցիալական և հասարակական խնդիրների արտացոլումն արվեստում, մասնավորապես շեշտադրելով գեղարվեստական տպագրության ոլորտի փոխկապակցվածությունը տվյալ երկրի տնտեսական զարգացվածության հետ:

Հանդիպմանը ներկայացվեցին նաև Էստոնիայի արվեստի ակադեմիան, Տալլինի Գեղարվեստական տպագրության տրիենալեն, Տալլինի «Ուբու նուար» գեղարվեստական տպագրության քաղաքային արվեստանոցը և ցուցադրվեց արվեստանոցի մասին պատմող ֆիլմ:

Հանդիպումն ավարտվեց բովանդակալից հարց ու պատասխանով:

Հանդիպման և Ինգա Հեամեգիի անհատական ցուցահանդեսի մասին մանրամասն տեղեկություն կարելի է գտնել Երևանի Ժամանակակից արվեստի թանգարանի, ինչպես նաև «Մշակույթների երկխոսություն» (KulturDialog Armenien) կազմակերպության կայքերում և ֆեյսբուքյան էջերում: